

ՓՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԵՐՄԻՆԱՍՏԵՂԾՄԱՆ ՄԻՋՈՑ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ

Ալինա Պետրոսյան

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան

Վերլուծելով տարբեր գիտական աշխատանքներ՝ գալիս ենք այն եզրակացության, որ տարբեր ժամանակներում փոխաբերությունների կարևորությունը թերագնահատվել է այն հիմնավորմամբ, որ փոխաբերությամբ սուկ լեզվաձևական նկարագրական հնար է: Փոխաբերական լեզուն դիտվել է որպես խաբուսիկ, մտքին ճշմարտացիություն չհաղորդող լեզու նաև էմպիրիզմի ծաղկման շրջանում: Ուստի, հաշվի առնելով նաև այս հանգամանքը, այն չի համարվել կիրառելի գիտական խոսույթի շրջանակում: Ավելին, բազմաթիվ հեղինակների կողմից առանձնացվել են «գեղագիտական», «օրնամենտալ» կամ «դեկորատիվ» փոխաբերություններ (Cooper 1986; Schön 1963; Soyland 1994): Այս հեղինակները թերագնահատել են փոխաբերությունների կարևորությունը՝ դիտարկելով այն որպես լեզվական այլընտրանքային՝ «լրացուցիչ» միջոց կամ «զարդարանք»: Այսպիսի տեսակետի դեպքում փոխաբերությամբ բացատրվում է որպես շեղում բառերի և լեզվի պատշաճ օգտագործումից: Հոբսն (Hobbes 2006) իր հերթին շեղում հանդիսացող փոխաբերություններն անվանել է անհեթեթ և խաբուսիկ, իսկ Լոքը (Locke 2007), հավատարիմ մնալով էմպիրիստական տեսությանը, համարել է, որ փոխաբերությամբ սխալանքի և խաբուսության հզորագույն գործիք է:

Ի հակադրություն այս մոտեցումների, վերջին տասնամյակի բազմաթիվ հեղինակներ շեշտադրում են փոխաբերություն երևույթի ճանաչողական նշանակությունը: Լեքոֆը և Ջոնսոնը իրենց «Փոխաբերությունը, որով ապրում ենք» աշխատանքում ուսումնասիրում են փոխաբերության ճանաչողական հայեցակետը և պնդում, որ փոխաբերությունը մարդու ճանաչողական համակարգի առանցքային բաղադրիչներից է: Իրենց հիմնավորումներում հեղինակներն օգտագործում են «առօրեական փոխաբերությամբ», «առօրյա կիրառություն» և այլ արտահայտություններ, որոնք միտված են այս գաղափարի ամրապնդմանը: Ըստ Լեքոֆի և Ջոնսոնի՝ «մեր հասկացութային համակարգը ... հագեցած է առօրեական փոխաբերությամբ» (Lakoff and Johnson 2003): Քիթեյն (Kittay 1987) իր հերթին պնդում է, որ «հասարակ խոսույթի շրջանակում չենք կարող շարադրել նույնիսկ երեք նախադասություն առանց դրա (փոխաբերությամբ կիրառելու) ... »: Ուեյլը (1994) նշում է, որ «առօրյա խոսքը հագեցած է փոխաբերությունների այնպիսի չափաբաժնով, որ մենք հազվադեպ ենք գիտակցում վերջինիս առկայությունը»: Այս հեղինակների տեսակետների ընդհանրությունը նկատվում է յուրաքանչյուրի կողմից արված եզրահանգումներում առ այն, որ փոխաբերության կիրառությունը ամենօրյա և մշտական բնույթ է կրում, ուստի պատշաճ ուշադրություն պետք է դարձնել փոխաբերություն երևույթին: Կարելի է ասել, որ փոխաբերությունները ձևավորում են իրականության վերաբերյալ մեր ընկալումները, համաձայն այն պնդման, որ «փոխաբերություններն ունեն հետևություններ/ներակա իմաստներ, որոնք ընդգծում են ... մեր փորձառության որոշ հայեցակետեր» (Lakoff and Johnson 2003): Բազմապիսի ընկալումներ ձևավորելուց զատ՝ փոխաբերությունները, կիրառվելու դեպքում, ստեղծում են նաև մերօրյա իրականությունը (Lakoff

and Johnson 2003): Ռորթին (1980) պնդում է, որ «մեր փիլիսոփայական համոզմունքների մեծ մասը ձևավորվում է առավելապես պատկերներով, քան ենթադրություններով, փոխաբերություններով, քան հասկացություններով»: Հատկանշական է, որ նմանօրինակ պնդումները գերակշռում են նաև 90-ականներին: Ըստ Գիբբսի (1994)՝ «փոխաբերությունները ... ոչ միայն առօրյա մտածողության հիմքն են կազմում, այլև հանդիսանում են գիտական տեսության և գիտական փորձի շարունակությունը բազմապիսի ոլորտներում...»: Բժշկագիտությունն այս առումով բացառություն չի կազմում և բժշկության բազմաթիվ ճյուղերում մեծ կիրառություն ունեն մարդուն որպես մեքենա նկարագրող փոխաբերությունները: Դեռևս Վերածննդի դարաշրջանի բժշկագետների և բժշկություն ուսումնասիրողների մոտ գերիշխող էր այն միտքը, որ մարդու մարմնի կառուցվածքը և կենսական համակարգերը, ինչպես նաև մարմնում ընթացող բազմաթիվ գործընթացներ կարելի է նկարագրել առավել մատչելի կերպով, մասնավորապես՝ տեխնոլոգիայի ոլորտին արված բառապաշարային հղումների միջոցով: Օրինակ՝ Վերածննդի դարաշրջանի առանցքային դեմքերից մեկը՝ Անդրեաս Վեզալիուսը իր՝ “De Humani Corporis Fabrica” աշխատությունում լայնորեն կիրառում է մեքենաչինության և տեխնոլոգիայի ոլորտների եզրությունները՝ դարձնելով դրանք բժշկագիտական փոխաբերություններ, համաձայն որոնց մարդն օժտված է մեքենայանման գործառույթներով (Vesalius 1999): Այս առումով Վեզալիուսի աշխատանքն ունի ընդհանրություններ Լեոնարդո դա Վինչիի աշխատանքների հետ: Իր “Notebooks” աշխատությունում Լեոնարդոն հստակորեն արտահայտում է այն միտքը, որ մարդկային մարմինը Արարչի կողմից ստեղծված մեքենա, մեխանիզմ կամ գործիք է (Vesalius 1888): Հասկացության այսպիսի միավորների կիրառությունը բժշկության ասպարեզում առավել դյուրին էին դարձնում մարդու անատոմիական առանձնահատկությունները և ախտահարումների բնույթն ընկալելը մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ ժամանակակից տեխնիկայի զարգացումը գտնվում էր սաղմնային մակարդակում, իսկ մարդկությունը չէր թևակոխել անատոմիայի ոլորտում կարևորագույն հայտնագործությունների փուլը: Մեքենաչինության ոլորտին դասակարգվող փոխաբերությունները, ինչպես նշվեց վերևում, նկարագրում են մարդու մարմինը որպես մեքենա, հետևաբար, այդ մեքենայի բաղկացուցիչ մասերը կարող են տարհանվել կամ փոխարինվել որևէ այլ մասով անսարքության դեպքում: Ելնելով այս վարկածից՝ կարելի է ասել, որ երիկամային անբավարարության դեպքում հիվանդին բուժում են՝ կատարելով երիկամի փոխպատվաստում, սրտի փականային արատների դեպքում կարելի է կատարել արհեստական փականների տեղադրում, իսկ օրինակ սրտի տարբեր ախտահարումների դեպքում կարելի է կատարել նույնիսկ սրտի փոխպատվաստում:

Վերջին տասնամյակում տեխնոլոգիաների զարգացումը և նոր սարքավորումների ի հայտ գալը նույնպես հանգեցրել են բազմաթիվ նոր փոխաբերությունների ձևավորմանը: Սա պայմանավորված է այն ճանաչողական գործառույթներով, որոնցով օժտված են փոխաբերությունները: Տվյալ դեպքում փոխաբերությունները լուծում են գիտական խոսույթում անհրաժեշտ և դեռևս բացակայող հասկացության միավորների ձևավորման խնդիրը: Ժամանակակից տեխնիկայի զարգացման և բազմաթիվ գիտագործնական նվաճումների արդյունքում անհրաժեշտություն է առաջանում վերաձևավորել որոշակի ոլորտների բառապաշարային միավորները՝ տեղափոխելով դրանք այն մակարդակ, որտեղ բացակա-

յում է անհրաժեշտ հասկացությունը: «Փոխաբերությունը որով ապրում ենք» աշխատությունում Լեքոֆը և Ջոնսոնը գրում են, որ «...առօրյա կյանքը, ոչ միայն լեզվի, այլև մտածողության և գործունեության մակարդակներում գերհագեցած է փոխաբերություններով: Մեր հասկացութային համակարգը, որով մտածում և գործում ենք, ըստ էության, փոխաբերական է» (Lakoff and Johnson 2003): Կարելի է ասել, որ գիտական համատեքստում շատ հաճախ կիրառվում է իմաստաբանական որևէ դաշտի միավորների վերաձևավորման միջոցով երևան եկած հասկացություն, որի հիմքում ընկած է մեկ այլ իմաստաբանական դաշտում վաղուց արմատացած երևույթ մատնանշող հասկացություն: Արդյունքում, ի հայտ են գալիս վերաձևավորված հասկացութային միավորներ, որոնք ծառայում են որևէ երևույթի իմաստաբովանդակային կողմն առավել մատչելի և հստակ ապահովելուն՝ նպաստելով ճշգրիտ ընկալումների ձևավորմանը: Համակարգիչների ստեղծումն, օրինակ, և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին հատուկ արտահայտությունները նպաստել են այնպիսի փոխաբերությունների ձևավորմանը, որոնք օգտագործվում են քաղցկեղի մասին հոդվածներում, քաղցկեղածին բջիջների վերաբերյալ նկարագրություններում ինչպես հետևյալ նախադասություններում՝ “Transformation of a normal cell to a cancer cell represents a self-perpetuating programming error” (Schottenfeld 1984), “DNA encodes information through the order, or sequence” (Alberts et al. 2002), “Transcription and translation are the means by which cells read out” (Alberts et al. 2002) և այլն: Ուռուցքաբանական ենթօլորտի գիտական նյութերում կարելի է հանդիպել նաև այնպիսի օրինակների, համաձայն որոնց մարդու իմունային համակարգի տարրերը կարելի է գործադրել և անջատել (turn on and off) ինչպես օրինակ “DNA-binding form of the protein serves to turn genes off”, “...the expression of a target gene is switched on or off...”, “...each gene is turned on at a different stage of development...” (Alberts et al. 2002):

Գիտությունը, գիտական նվաճումներն ու գիտելիքը մարդկությանը հաղորդում են շատ ավելին, քան հնարավոր է տեսնել և ընկալել անզեն աչքով: Այնուամենայնիվ, այն ամենն, ինչ անհայտ է և տեսանելի չէ, պետք է դառնա մատչելի որևէ այլ եղանակով: Ստեղծագործ միտքը և մտածողությունը շատ հաճախ անհրաժեշտ են լինում առկա գիտելիքից անդին տեղի ունեցող երևույթները հասկացութային մակարդակում առկայացնելու համար: Գիտության անձանոթ բևեռներն ու հայեցակետերը ընկալվում են հիմնականում խոսքային տիրույթի ծանոթ և առօրյա միավորների վերաձևավորման և նորովի կիրառման միջոցով: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է կատարել եզրահանգում, որ գիտական խոսույթի շրջանակում անհրաժեշտ է լինում օգտագործել ճանաչողական գործառնություններ ունեցող փոխաբերություններ, քանի որ հայտնիի և անհայտի կապը հաճախ հնարավոր է դառնում փոխաբերույթի շնորհիվ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Alberts, B.; Johnson, A.; Lewis, J.; et al. (2002) *Molecular Biology of the Cell* (4th ed.). New York: Garland Science.
2. Cooper, D.E. (1986) *Metaphor*. Oxford: Basil Blackwell.

3. Gibbs, R.W. (1994) *The Poetics of Mind: Figurative Thought, Language, and Understanding*. Cambridge: Cambridge University Press.
4. Hobbes, T. (2006) *Leviathan*. <<http://www.earlymoderntexts.com/pdfbits/ho11.pdf>>.
5. Kittay, E.F. (1987) *Metaphor: Its Cognitive Force and Linguistic Structure*. Oxford: Oxford University Press.
6. Locke, J. (2007) *An Essay Concerning Human Understanding. Book III: Words*. <<http://www.earlymoderntexts.com/pdf/lockess3.pdf>>.
7. Lakoff, G. and Johnson, M. (2003) *Metaphors We Live by*. London: The University of Chicago Press.
8. Rorty, R. (1980) *Philosophy and the Mirror of Nature*. Princeton, New Jersey: Princeton University Press.
9. Schön, D.A. (1963) *Displacement of Concepts*. London: Tavistock.
10. Soyland, A.J. (1994) *Psychology as Metaphor*. London: SAGE.
11. Schottenfeld, D. (1984) *Chronic Disease in the Workplace and Environment: Cancer*. <<http://www.ncbi.nlm.nih.gov/pubmed/6380421>>.
12. Vesalius, A. (1999) *On the Fabric of the Human Body. Book II: The Ligaments and Muscles*. // Tr. by W.F. Richardson in collaboration with J.B. Carman. <<http://books.google.am/>>.
13. Way, E.C. (1994) *Knowledge Representation and Metaphor*. Oxford: Intellect.
14. (1888) *The Notebooks of Leonardo Da Vinci*. // Tr. by J.P. Richter. Vol.1. <http://www.gutenberg.org/catalog/world/readfile?fk_files=3275533&pageno=2>.

Метафора как средство формирования медицинских терминов

Метафоры помимо их использования в обиходной речи находят также широкое применение в научных публикациях. Данная статья посвящена исследованию семантики языка метафор в области медицины. Язык метафор решает проблему формирования понятий в медицине посредством переноса установившегося значения в новую область.

Metaphor as a Means of Term Formation in Medical English

Metaphors permeate not only the daily language, but are also well-placed within the scientific domain. The paper explores the semantics of metaphoric language specifically in the field of medicine. Metaphoric language solves concept formation problems in medicine, particularly by shifting a well-grounded meaning from any semantic field to the one needed.